ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2024 թվականի N 09-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման հավելվածի 25-րդ և 26-րդ կետերով.

ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմում ընդգրկված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանի, «Գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ Բարդուխ Գաբրիելյանի, «Հայաստանի երկրաբանների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Յուրիկ Հակոբյանի և «Մանթաշյանց գործարարների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Սուրեն Մելիքյանի անդամությունը երկարաձգել երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ